ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը հայտարարում է մրցույթ «ՀՀ Գեղարքունիքի մարզային մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Տնօրենի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար սահմանվում են հետևյալ պայմանները՝

1. ՀՀ քաղաքացիություն.
2. բարձրագույն կրթություն.
3. հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ սպորտի բնագավառի աշխատանքային ստաժ.

Հիմնական գործառույթները՝

1. Ապահովում է համապատասխան ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը, ընտրած մարզաձևում պարապողների սպորտային ընդունակությունների կատարելագործումը,
2. Հանրակրթական ուսումնական հաստատությունների հետ հաստատում է սերտ կապ՝ օժանդակելով ֆիզկուլտուրային արտադասարանական աշխատանքների, ֆիզկուլտուրային առողջարարական միջոցառումների կազմակերպմանը,
3. Հայաստանի Հանրապետության ազգային և օլիմպիական հավաքական թիմերի համար նախապատրաստում է բարձրակարգ մարզիկներ:

(Կանոնադրությունը կցվում է)

Մրցույթին մասնակցել ցանկացողները թղթային պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) լրացված դիմում, **ձևը կցվում է**
2)ինքնակենսագրություն, **ձևը կցվում է**
3) անձնագիր կամ նույնականացման քարտ (բնօրինակը և պատճենը)
4)2 գունավոր լուսանկար՝ 3x4 չափսի
5) բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմը (դիպլոմները) (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները)
6) օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթը (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները) առկայության դեպքում,
7) գիտական աստիճանի վկայականը (բնօրինակը (բնօրինակները) և պատճենը (պատճենները) առկայության դեպքում
8) աշխատանքային գործունեությունը հավաստող վավերացված համապատասխան տեղեկանք (փաստաթուղթ), որը կբավարարի սահմանված պահանջներին և հաշվառման համակարգի տեղեկատվական բազայում առկա տվյալները ներառող տեղեկանք նախկին աշխատանքային գործունեության վերաբերյալ:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է առձեռն:

Փաստաթղթերն ընդունվում են ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 հասցեով՝ ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10^{00}-ից մինչև 12^{30}-ը: Դիմումները ընդունվում են 2023 թվականի հունվարի 26-ից փետրվարի 15-ը ներառյալ, տեղեկատու հեռ.՝ /060650626/, էլեկտրոնային փոստի հասցեն՝ gegharquniq.andznakazm@mta.gov.am:

«ՀՀ Գեղարքունիքի մարզային մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության զարգացման և բարեփոխման մշակված հայեցակարգը հարցազրույցի մասնակիցը թղթային տարբերակով պետք է հանձնաժողովին ներկայացնի 2023 թվականի փետրվարի 27-ին:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2023 թվականի փետրվարի 27-ին՝ ժամը 10^{30}-ին ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքում

(հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2023 թվականի փետրվարի 28-ին՝ ժամը 15^{00}-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքում (հասցեն՝ ք.Գավառ, Կենտրոնական հրապարակ 7):

Հիմնական աշխատավարձը՝ 176000 (մեկ հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ:

Մրցույթի թեստավորման փուլին նախապատրաստվելու համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերի շրջանակը՝

ՀՀ Սահմանադրություն

https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510

ՀՀ աշխատանքային օրենսգիրք

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172153

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=164932

«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենք

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120999

«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենք

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142597

«ՀՀ Գեղարքունիքի Մարզային մարզադպրոցի կանոնադրություն»՝

կցվում է:

(Թեստային հարցերի նմուշը կցվում է)

Հարցազույցի փուլին նախապատրաստվելու համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերի և հմտությունների շրջանակն է՝

ՀՀ աշխատանքային օրենսգիրք

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172153

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=164932

«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենք

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120999

«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենք

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142597

«ՀՀ Գեղարքունիքի Մարզային մարզադպրոցի կանոնադրություն»

՝ կցվում է:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ

Աշխատակազմի /անձնակազմի/ կառավարում

https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/1.pdf

Բարեվարքություն

https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/3.pdf

Խնդրի լուծում

https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf

Հայեցակարգը պետք է՝

1) լինի առավելագույնը 20 էջ.
2) պարունակի պետական կազմակերպության ոլորտի առկա խնդիրների համակարգային վերլուծությունը և գնահատումը.
3) ներառի պետական կազմակերպության բնագավառի զարգացման և բարեփոխման առաջարկները:

Անձնական որակների՝ աշխատանքային էթիկայի և բարեվարքության կանոնների իմացություն:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին (հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, հեռ՝ **060650626**):

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և չափորոշիչները սահմանելու մասին» N 539-Ն որոշման հավելվածի 17-րդ կետը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը հասարակական կազմակերպություններին հրավիրում է դիմելու նախարարության «ՀՀ Գեղարքունիքի մարզային մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի մրցութային հանձնաժողովում ընդգրկվելու նպատակով:

Դիմել կարող են այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակները և խնդիրներն առնչություն ունեն պետական կազմակերպության գործունեության ոլորտի հետ և դիմելու ամսվան նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն են ծավալել տվյալ ոլորտում: Սույն պահանջները բավարարող հասարակական կազմակերպությունների դիմումների հիման վրա համակարգչային ծրագրով՝ պատահական ընտրության սկզբունքով ընտրվելու է մեկ հասարակական կազմակերպություն:

Բոլոր հետաքրքրված հասարակական կազմակերպությունները ստորագրված դիմումները կարող են ներկայացնել՝ ուղարկելով gegharquniq.andznakazm@mta.gov.am էլեկտրոնային հասցեին:

Դիմումի մեջ անհրաժեշտ է նշել՝

1. Կազմակերպության անվանումը
2. Կազմակերպության գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն
3. Գործադիր մարմնի ղեկավարի անուն, ազգանունը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն Կազմակերպության կանոնադրությունը:

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզետի 2023 թվականի հունվարի -ի N -Ա որոշման

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթներին մասնակցելու համար ներկայացվող դիմումի ձևանմուշ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի

գլխավոր քարտուղար

Սևակ Խլղաթյանին

……
¹ÇÙáÕÇ ³ÝáõÝÁ, Ñ³Ùñ³ÝáõÝÁ, ³½·³ÝáõÝÁ

….

……
¹ÇÙáÕÇ Ñ³ëó»

….

……
(³ÝÓÝ³·ñÇ ë»ñÇ³Ý, Ñ³Ù³ñÁ, »ñµ ¨ áõ±Ù ÏáÕÙÇó ¿ ïñí»É)

….

……
….

(Էլ. փոստի հասցե, հեռ.)

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից հրապարակված հայտարարությանը՝ խնդրում եմ ինձ թույլատրել մասնակցելու «----------» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին:

Մրցութին մասնակցելու համար ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1. Ինքնակենսագրություն ---------- էջ:
2. Անձնագիր, նույնականացման քարտ ----------էջ:
3. Գունավոր լուսանկար ------ հատ:
4. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (փաստաթղթեր) ---------էջ:
5. Օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթուղթ (փաստաթղթեր) ---------էջ:
6. Գիտական աստիճանի վկայական ----------էջ:
7. Աշխատանքային գործունեությունը հավաստող վավերացված համապատասխան տեղեկանք (փաստաթուղթ) ------- էջ:

Սույնով հայտնում եմ, որ

1) Չեմ դատապարտվել հանցագործության կատարման համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

2) օրենքի համաձայն չի արգելվել որոշակի պաշտոններ զբաղեցնել կամ չեմ զրկվել որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3) նախորդ 3 տարվա ընթացքում չեմ եղել սնանկանալու պատճառով լուծարված և կազմակերպության պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար: _____

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին

Դիմող՝_____ « »

_____2023

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության մարզպետի 2023 թվականի հունվարի N -Ա որոշման

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթներին մասնակցելու համար ներկայացվող ինքնակենսագրության ձևանմուշ

Ինքնակենսագրություն

Լուսանկար

Ազգանունը, անունը, հայրանունը	
Ծննդյան ամսաթիվը և տարին, ծննդավայրը	
Կրթությունը	
Մասնագիտությունը	
Որակավորումը	
Գիտական աստիճանը	
Գիտական կոչումը	
Ինչ օտար լեզուների է տիրապետում	
Մասնագիտական վերապատրաստում	
Զինապարտությունը, զինվորական կոչումը	
Անձնագրային տվյալներ	
Հանրային ծառայության համարանիշ	
Հասցեն (հաշվառման, բնակության)	
Հեռախոսը (բնակարանի, բջջային, աշխատանքային)	
Ընտանեկան դրությունը	

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

	-		
	-		
	-		
	-		

	-		
	-		
	-		
	-		

(սկիզբը) (ավարտը) (հիմնարկի, կազմակերպության անվանումը, պաշտոնը)